

ԿՐՈՆԱԿԱՆ

ՏԸՆ ԱՑԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՈՒ(*)

Այսօր Վարդավառ է: Կը փառաւուրենք մեր Տիրոջ այն հրաշափառ կերպարանափոխութիւնը որ ըստ երեք համատես Աւետարաններու բացարութեան Ալյակերպութիւն կը կոչուի և որ ըստ Եկեղեցոյ աւանդութեան տեղի ունեցաւ Թարոր Եւրան վրայ:

Այդ հրաշալի գէպքին մանրամասնութիւնները կը գտնուին առաջին երեք Աւետարաններու մէջ: Չորրորդ Աւետարանի Հեղինակը՝ Յովհաննէս իր ականատեսի պարզ վկայութիւնը միայն կուտայ: Նոյնը կ'ընէ Ս. Պետրոս Առաքեալ իր Կաթոլիկեաց Բ. Թուղթին մէջ: Երրորդ ականատես վկան Ս. Յակոբոս Առաքեալ չունի ուեւէ գրաւոր վկայութիւն, վասնզի անոր ձեռքերը շուտով շղթայուեցան, անոր շրթունքները շուտով ըմբեցին Տիրոջ բաժակը: Բայց այս Տաճարին մէջ զանձարանուած է անոր Սուրբ Գլուխը: Անոնք որ կրցած են անոր շրթունքներէն պատզամներ լսել պիտի կրնան լսել նաև ամենասպերճախաս վկայութիւնը Թարորական գէպքի մասին: Աւել տեսաք զփառս նորա, զփառս իրերը զՄիածնին առ ի Հօրէ լի չնորոնք եւ ճշմարտութեամբ, պիտի ըսէ անիկա անպատճառ ձայնակցելով եղորք:

Երեք Աւետարանինները Ալյակերպութեան գէպքը կը կապէն ուրիշ կարեւոր գէպքի մը հետ որ անէ չարաթ մը առաջ պատահած էր և ուր տասներկու աշակերտները միահամուռ կերպով խոստովանած էին իրենց հաւատքն ու համոզումը իրենց Սրբազն Վարդապետին մասին: խօստովանած էին թէ Ան է Քրիստոսն կենդանի Աստուծոյ Որգին:

Յիսուս այդ խօստովանաւթիւնը լնդունած էր և գնահատած, բայց իր անուշ խօսքերուն հետ միասին լսել տուած էր զառն յայտարարութիւններ՝ յայտնած էր իր ահաւուան տիրուր պարագաները, որոնք սոսկում պատճառած էին բոլոր լուսներուն և տաղնապ յառաջ բերած անոնց միացերուն մէջ:

(*) Խորց Նոյին Ամեն. Գատրիարք Ս. Հօր, Վարդապատ ունի, առաջին խօսուած:

Անկարելի էր հաշտեցնել իրենց քանի մը օրեր առաջ ըրած խօստովանութիւնը այդ յայտարարութիւններուն հետո Անկարելի էր հաշտեցնել Մեսիան և Անոր Առաքելութիւնը պարտութեան, ամօթի և մահուան հետո Անկարելի էր ընդունելի թէ ամենակարող ու յաւիտենական Աստուծոյ Որգին, մահկանացու մարդոց ձեռքով պիտի չարչարուէր, խաչուէր ու թաղուէր:

Տիրոջ համար զարմանալի չէին իր առշակերտներու այս անկարելիութիւնները որովհետեւ գիտէր թէ անոնք մասամբ միայն ըմբռնած էին իր Մարդեղութեան Խորուրդը, անոր համար էր որ միշտ կը հրահանաւէր անոնց որ վերապահնեն իրենց գիտածները մինչեւ որ ամբողջանայ իրենց վերածնութեան շրջանը: Սակայն իր անսահման բարութեամբ գարձեալ պատեհութիւնները ստեղծեց աշակերտներուն համար որ անազարտ պահնեն իրենց նոր յայտարար հաւատաքը: Այդ պատեհութիւններէն մին եղաւ այն՝ ինչ որ, ըստ Աւետարանիններու, այդ գէպէն շաբաթ մը վերջ պատահեցա բարձր լերան մը վրայ, զիշերային աղօթքի պահուն Յիսուսի մարդկային մարմինը, ճշմարիտ Տաճար Աստուծոյ, յանկարծ գերբնական աննկարագրելի գեղեցկութեան մէջ պարուրուած տեսնուեցաւ, կարելի չեղաւ նմանեցնել զայն երկրի վրայ գտնուող ուեւէ գեղեցկութեան, հաշիւ հազ առաւտատեան արեւը իր լուսաճառանէ շգեղութեամբ կրնար մօտենալ պարզուած տեսարանին, այդ պատճառուած ականատանինները Յիսուսի գէմքը արեգակի նմանցուցին, իսկ հագուստները լոյսի: Տարակայու չկայ թէ երեք ականատես աշակերտներուն այս հրաշալի ասուածայայտնութեան առջև մոռցան իրենց վերջին յաւահատական տագնապները: Այսպէս իրենց աշքիրուն առջև, անգամ մը ևս նոր յայտնութեամբ մը ճշմարտած տեսան ինչ որ իրենց Տէրը խօսած էր Հին Կտակարանի և անոր մեծագոյն գէմքերու՝ Մովսէսի և Եղիսաբի մասին: Այս բոլորը և ուրիշ նման հոգեւոր մտածումներ վերակենդանացուցին և ամբազնդեցին իրենց հաւատաք:

Յիսուսի այլակերպութեան դէպքը հանգիստարապէս տօնելով հկեղեցին ոչ միայն կը հռչակէ, կը փառաւորէ Անոր աստաւածայայտնութիւնը այլ և նպատակ

ունի հաւատացեալներուդ տալու երեքաւ-
շակերտներու փորձառութիւնը : Ձեզ կը
կրաւերէ հետեաբար Թաթօր լերն բար-
ձունքները և առաւել քան զգալի Թաթօրա-
կան լեռ գէպի երկնաբերձ և իմանալի իու-
րանները՝ հոն տեսնելու, լսելու և զգալու
ինչոր կենսական է քրիստոնէական հաւատ-
քի ամրապնդման և զերակենդանութեան
համար : Երանի այսոցիկ որ սուրբ են
սրբիք, զի նորա զիստուած տուսցին»
կ'ըսէ, Տէրք :

Ձեզմէ անսնք որ կ'ընդունին հրաւերը
և կրնան սուրբ սրտով բարձրանալ սուրբ
լեռը, աղօթքի լեռը, իրենց հոգիին աչքե-
րով պիտի տեսնեն մարդացեալ Փրկիւը իր
աստուածային փառքին մէջ : Անոր գէմքին
մէջ ցուցած պիտի տեսնեն Աստուածոյ լու-
սապայծաւ սէրն ու սրբութիւնը՝ մարդկա-
յին կեանքի արեւն ու լոյր :

Անոր հետ տեսնեած ծանօթ մահկա-
նացուներու փառաւորու և զգալի ներ-
կայութեան մէջ պիտի տեսնեն հանդերձեալ
անգանճան կեանքի զարդապետութեան
ճշմարտութիւնը : Պիտի համոզուին թէ
Քրիստոս է լրում օրինաց և մարդքէից :

Պիտի համոզուին թէ Հին և նոր Կտա-
կարանները սերտ յարաբրութիւն և ան-
բաժանելիութիւն ունին իրավունք հետ : Պի-
տի լսեն Հայր Աստուածոյ սիրոյ ձայնը իր
Որդույն մասին : Պիտի լսեն անոնց միաւ-
նականութեան վկայութիւնը : Կերերջանիկ
հոգուով պիտի համոզուին թէ իրենց կեան-
քի սկիզբ և զարմանը Քրիստոս է և Ան-
միայն կրնայ զոհացում տալ իրենց հոգե-
կան բոյր պահանջներուն ու անհնկալու-
թիւններուն : Երբ բոյր Մօվկէսներն ու
Եղիանները անհետանան Ան միայն պիտի
մայ իրեւ միակ և մշանջենական տուած-
նորդը կեանքի : Վասահարար պիտի տես-
նեն Աւետարանի զերազանցութիւնը և ա-
նոր շնորհաց մէջ պիտի ուղեն արժեցնել
իրենց կեանքը : Այս բոյրը պիտի այլա-
կերպեն և պայծառակերպեն իրենց կեան-
քը, պիտի ուղեն բարձրանալ գէսի տեւ-
ին լուսաւորը եւ իմանալի գագաթները,
գէպի աւելի զսեմն ու զեղեցիկը, ճշմա-
րիսն ու սրբազնը եւ երբ լեռնէն վար
իջնեն կեանքի արցունքի հովիտներու մէջ, -
վշոտ ու քարքարուտ ճանապարհներու և
Պողոսիթաներու վրայ քալելու՝ իրենց հետ
պիտի գտնեն զիստու :

Քրիստոսի Այլակերպութեան տօնը այս-
պէս հոգեւոր փորձառութեան, ներչնում-
ներու և վայելքի առիթ մըն է : Զեր նառ-

խահայրերուն ամենասիրելի տօներէն մին
եղած է ան, զայն զարգարեցին իրենց
հնագարեան նաւասարդեան և Վարդավառի
աւանդութիւններով և խորհրդաւոր սովո-
րութիւններով :

Նոյն զգացումներով տարուած Սրբոց
Յակոբեանց Միաբանութեան նախահայրեն
ալ իրենց պանծալի Սթոռոխն սկզբնաւորու-
թեան ամենաերջանիկ առիթովը, Յակոբու
Տեառնեղբայր Արգար Առաքելոյն գահա-
կալութեան հանդիսութեամբ զարգարեցին
զայն օրուան կրաշալի խորհուրդը աւելի
մտցնելու իրենց ապագայ սերուաններու
սրտին ու տաքին երջանկաւէս օր մին էր
այն օրը երբ մեր Տիրող Համբարձումէն զերջ
Ս. Հոգուզ զերածնած և շնորհազարդուած
Առաքեական զամբ Աստուածամօր հետ
միասին հաւաքուեցաւ այս Տաճարի տեղ-
ուոյն վրայ ուր կը գտնուէր Տեառնեղբայր
բնակարանը և Ս. Հոգուզ առաջնորդու-
թեամբ առաջին եկեղեցւոյ առաջնորդ և
գլուխի կարգեցին Ս. Յակոբոս Տեառնեղ-
բայրը : Այդ եկեղեցիէն էր օր անմիջապէս
առաքեանի ճառագայթեցին գէսի Ս.
Երկիր մերձակայ երկիրները Աւետարանի
երկնային սերմերը ցանելու, լոյսը տարա-
ծելու : Այդ առաքելութեամբ մեր Կայրե-
նիքը եկան Թագէսու և Բարթողիմէսու Սրբ-
րազան Առաքեանները : Անոնց քարոզու-
թեամբ լուսաւորուած հայ կրօնաւորներ
փութացին գալ Ս. Երկիր, աստուածակոխ
յայրերը Համբարձելու և անոնց կապելու
իրենց կեանքը : Ժամանակի թթացիքն
հաստացեցին գանքեր և գեղակեր եկե-
ղեցիներ : Հաստացեցին Եպիսկոպոսական
Աթոռ Յակոբոս Տեառնեղբայր աթոռանիստ
այս վայրին մէջ Ս. Գլխագրի Սրբարանին
առընթեր, և յետոյ անոր տուին զամարիար-
քական իշխանութիւն և ի գին ամէն զան-
գութեան պահեցին զայն ի փառս Աստուածոյ
և Հայրենիքի :

Այսլայ նուիրական է Այլակերպու-
թեան տօնը, հոգեւոր, կրօնական, եկեղե-
ցական և պագային ներշնչումներով հա-
րուստ, որ կրնայ պայծառակերպել մեզ :

Բոլորիդ կը մատթեմ այդ պայծառա-
կերպութիւնը, Կ'աղօթեմ որ Սրբարու-
թեան Արեգակի լոյսով, Զերմութեամբ և
օրհնութիւններովը արդիւնաւորուի ձեր և
ձեր զաւակաց կեանքը և ըլլաք անոնց
հետ երջանիկ, այժմ և յաւիտեան . ամէն :